ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«27» ապրիլի 2020 թվականի N 194-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Նարեկ Վարդգեսի Կարապետյանին տալ երկհարկանի բնակելի տան կառուցման և տարածքի մասնակի պարսպապատման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 14-րդ նրբանցքի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Նարեկ Վարդգեսի Կարապետյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարեկ Վարդգեսի Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» ապրիլի 2020 թվականի N 195-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Լիլիթ Սերգեյի Անտոնյանին տալ մեկ հարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Բարեկամության փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 3/2 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Լիլիթ Սերգեյի Անտոնյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Լիլիթ Սերգեյի Անտոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» ապրիլի 2020 թվականի N 196-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Լևան, Թամարա, Սաթենիկ, Վլադիմիր և Լիլիթ Դոխոյաններին տալ երկհարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12-րդ փողոցի թիվ 13 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Լևան, Թամարա, Սաթենիկ, Վլադիմիր և Լիլիթ Դոխոյաններին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Լևան, Թամարա, Սաթենիկ, Վլադիմիր և Լիլիթ Դոխոյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * RA KOTAYK REGION JRVEZH MUNICIPALITY * КОТАЙКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ДЖРВЕЖ * 03546091

2020 թ. ապրիլի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«27» ապրիլի 2020 թվականի N 197-Ա

## ՌՈՒԶԱՆՆԱ ՎԱՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Բարեկամության փողոցի թիվ 36 տան բնակիչ Ռուզաննա Վանիկի Վարդանյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ Ռուզաննա Վանիկի Վարդանյանը բնակվում է ընտանիքի երեք անձով, ինքը ներկայումս չի աշխատում, իր խնամքի տակ է անչափահաս աղջիկը՝ Սիրուշ Գրիգորի Հարությունյանը, ծնված՝ 2005 թվականին և մայրը՝ Համեստ Գեղամի Ներսեսյանը, ծնված՝ 1938 թվականին, Ռուզաննա Վանիկի Վարդանյանը ունի քաղցկեղային հիվանդություն, գտնվում է հետվիրահատական բուժման մեջ և ընտանիքի ֆինանսական և սոցիալական վիճակից ելնելով Ռուզաննա Վանիկի Վարդանյանը դիմել է համայնքապետարան՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով, որոշում եմ.

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Ռուզաննա Վանիկի Վարդանյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռուզաննա Վանիկի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» ապրիլի 2020 թվականի N 198-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 75-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից 2020 թվականի հունիսի 2-ին, ժամը 14:00-ին կազմակերպել աճուրդային վաճառք՝ համաձայն թիվ 1 հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գների, նախավճարի և քայլի չափերի:

2. Հաստատել հրապարակային ծանուցման տեքստը, համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Հանձնարարել Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված աճուրդով օտարման ենթակա հողամասերի հրապարակային ծանուցման հրապարակումը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և սահմանված կարգով ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:

4. Աճուրդի վարման համար աճուրդավար նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 28
գ. Ջրվեժ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2020 թվականի
ապրիլի 28-ի N 198-Ա որոշման

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| հ/հ | Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը | Մակերեսը հեկտար | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը | Ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ | Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները | Մեկնար-կային գինը (դրամ) | նախավճարի չափը (դրամ) | Քայլի չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 5, 07-057-0361-0024 | 0.14305 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 6500000 | 325000 | 325000 |
| 2 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 9, 07-057-0361-0027 | 0.1281 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 5800000 | 290000 | 290000 |
| 3 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 28, 07-057-0361-0023 | 0.1939 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 8800000 | 440000 | 440000 |
| 4 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 34 փողոց, թիվ 14, 07-057-962-001 | 0.0735 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 3400000 | 170000 | 170000 |
| 5 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 36 փողոց, թիվ 6, 07-057-936-014 | 0.1000 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 4500000 | 225000 | 225000 |
| 6 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 40 փողոց, թիվ 42, 07-057-960-002 | 0.0863 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 3900000 | 195000 | 195000 |
| 7 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 56 փողոց, թիվ 4, 07-057-958-015 | 0.0920 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 4200000 | 210000 | 210000 |
| 8 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 56 փողոց, թիվ 6, 07-057-958-014 | 0.0814 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 3700000 | 185000 | 185000 |
| 9 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 56 փողոց, թիվ 8, 07-057-958-013 | 0.0798 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 3600000 | 180000 | 180000 |
| 10 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 56 փողոց, թիվ 11, 07-057-939-013 | 0.1200 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 5400000 | 270000 | 270000 |
| 11 | Ջրվեժ համայնք, Ձովք գյուղ, 10-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 1/1 07-030-0027-0010 | 0.1100 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | գյուղատնտեսական արտադրության համար | չկա | չկա | չկա | 990000 | 49500 | 49500 |
| 12 | Ջրվեժ համայնք, Ձովք գյուղ Գլխավոր խճուղի 13/3, 07-030-0014-0030 | 0.0750 | բնակավայրի հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար | չկա | չկա | չկա | 700000 | 35000 | 35000 |
| 13 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 35 փողոց, թիվ 35/1, 07-057-0936-0111 | 0.0800 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 3600000 | 180000 | 180000 |
| 14 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 46 փողոց, թիվ 23/1, 07-057-0122-0030 | 0.07851 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | չկա | չկա | չկա | 3600000 | 180000 | 180000 |

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2020 թվականի
ապրիլի 28-ի N 198-Ա որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջրվեժի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի դասական աճուրդ

| Լոտի h/h | Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը | Մակերեսը հեկտար | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 5, 07-057-0361-0024 | 0.14305 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 6500000 |
| 2 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 9, 07-057-0361-0027 | 0.1281 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 5800000 |
| 3 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 13 փողոց, 1 փակ. թիվ 28, 07-057-0361-0023 | 0.1939 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 8800000 |
| 4 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 34 փողոց, թիվ 14, 07-057-962-001 | 0.0735 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 3400000 |
| 5 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 36 փողոց, թիվ 6, 07-057-936-014 | 0.1000 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 4500000 |
| 6 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 40 փողոց, թիվ 42, 07-057-960-002 | 0.0863 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 3900000 |
| 7 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 56 փողոց, թիվ 4, 07-057-958-015 | 0.0920 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 4200000 |
| 8 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 56 փողոց, թիվ 6, 07-057-958-014 | 0.0814 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 3700000 |
| 9 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 56 փողոց, թիվ 8, 07-057-958-013 | 0.0798 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 3600000 |
| 10 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 56 փողոց, թիվ 11, 07-057-939-013 | 0.1200 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 5400000 |
| 11 | Ջրվեժ համայնք, Ձովք գյուղ, 10-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 1/1 07-030-0027-0010 | 0.1100 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | գյուղատնտեսական արտադրության համար | 990000 |
| 12 | Ջրվեժ համայնք, Ձովք գյուղ Գլխավոր խճուղի 13/3, 07-030-0014-0030 | 0.0750 | բնակավայրի հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար | 700000 |
| 13 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 35 փողոց, թիվ 35/1, 07-057-0936-0111 | 0.0800 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 3600000 |
| 14 | Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 46 փողոց, թիվ 23/1, 07-057-0122-0030 | 0.07851 | բնակավայրի բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման համար | 3600000 |

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ սերվիտուտներ)՝ չկան: Ճանապարհներ, ջրատար, կոյուղի, էլեկտրահաղորդման գծեր, գազատար՝ չկան: Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ՝ չկան:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Ջրվեժի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց 76:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Ջրվեժի համայնքապետարան (Մելքոնյան փողոց 76, 2-րդ հարկ, հեռախոս 010-684929):

Աճուրդը կայանալու է 2020 թվականի հունիսի 2-ին ժ. 14:00-ին, Ջրվեժի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2020 թվականի մայիսի 30-ը, ժամը 14:00-ը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» ապրիլի 2020 թվականի N 199-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի և 53-րդ կետի գ) ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03062019-07-0076 վկայականը, տրված 2019 թվականի հունիսի 3-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2020 թվականի ապրիլի 23-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է առաջացել համայնքային սեփականություն հանդիսացող Զորաղբյուր գյուղի Անտառային փողոցի թիվ 2 հասցեի՝ բնակավայրի բնակելի կառուցապատման 531,0 քառ.մետր մակերեսով հողամասում գտնվող բնակելի տան մի հատվածի գործառնական նշանակությունը փոխադրելու բազմաբնակարան շենքի, ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Զորաղբյուր գյուղի Անտառային փողոցի թիվ 2 հասցեի՝ 531,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորից բաժանված $S_1$=298,9 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Զորաղբյուր, Անտառային փողոց, թիվ 2, $S_2$=232,1 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Զորաղբյուր, Անտառային փողոց, թիվ 2/1:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող Զորաղբյուր գյուղի Անտառային փողոցի թիվ 2/1 հասցեի՝ 232,1 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորում առկա շինության՝ բնակելի տան գործառնական նշանակությունը փոխադրել բազմաբնակարան շենքի:

3. Կառույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կառույցը ձեռք բերելու նպատակով գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած, նշված հասցեում փաստացի բնակվող անձանց:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 28
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» ապրիլի 2020 թվականի N 200-Ա

## ՆԱՐԻՆԵ ԱՄՈՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 տան բնակիչ Նարինե Ամոյի Մուրադյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը ներկայումս բաղկացած է 7 անձից,Նարինե Ամոյի Մուրադյանը և ամուսինը՝ Հուսիկ Գոգոյի Ասոյանը, ամուսնու ծնողները՝ Գոգո Ասոյանը և Խազալ Ռզգոյանը, չեն աշխատում, ինչպես նաև որպես եզդի ազգաբնակչության ներկայացուցիչներ չեն զբաղվում անասնապահությամբ, նրանց խնամքի տակ են 3 անչափահաս երեխաները՝ Նուբար, Գյոզալ և Կնյազ Հուսիկի Ասոյանները, ծնված՝ 2007, 2009, 2012 թվականներին, ընդ որում Գյոզալ Ասոյանը ունի տեսողության խնդիր և գտնվում է երկարատև բուժման մեջ, ընտանիքի եկամուտը չի բավականացնում ընտանիքի կարիքները հոգալու համար և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Նարինե Ամոյի Մուրադյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Նարինե Ամոյի Մուրադյանի ընտանիքին ցույց տալ ֆինանսական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարինե Ամոյի Մուրադյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» ապրիլի 2020 թվականի N 201-Ա

## ՀՌԻՓՍԻՄԵ ԱՐԿԱԴԻԻ ՂԱՐԱԲԱՂՑՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական 5-րդ թաղամասի թիվ 8-10 այգետնակի բնակիչ Հռիփսիմե Արկադիի Ղարաբաղցյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ Հռիփսիմե Արկադիի Ղարաբաղցյանը բնակվում է ընտանիքի երեք անձով, ինքը ներկայումս չի աշխատում, ունի առողջական խնդիրներ, իր հետ են բնակվում մայրը՝ Հասմիկ Փայլակի Ղարաբաղցյանը, ծնված՝ 1958 թվականին և հայրը՝ Արկադի Ագալոկի Պրուտյանը, ծնված՝ 1949 թվականին, ովքեր նույնպես չեն աշխատում և ընտանիքի ֆինանսական և սոցիալական վիճակից ելնելով Հռիփսիմե Արկադիի Ղարաբաղցյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Հռիփսիմե Արկադիի Ղարաբաղցյանի ընտանիքին ցույց տալ ֆինանսական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հռիփսիմե Արկադիի Ղարաբաղցյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 29
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» ապրիլի 2020 թվականի N 202-Ա

ՀՐԱՉՅԱ ԱՆՄԵՂԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Հրաչյա Անմեղիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Հաղթանակի փողոցի թիվ 30 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում թույլատրել քանդելու անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17102014-07-0037 վկայականում նշված 14,6 քառ.մետր մակերեսով թիվ 2 թոնրատունը, 34,2 քառ.մետր մակերեսով թիվ 3 անասնաշենքը և 17,7 քառ.մետր մակերեսով թիվ 4 ավտոտնակը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հրաչյա Անմեղիկի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» ապրիլի 2020 թվականի N 203-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Հենրիկ Աշոտի Խաչատրյանին տալ բնակելի տան վերակառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 23 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Հենրիկ Աշոտի Խաչատրյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հենրիկ Աշոտի Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» ապրիլի 2020 թվականի N 204-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Խանում Սուրենի Ջալիլյանին տալ քարե պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0355-0020 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողամասում:

2.Պարտավորեցնել Խանում Սուրենի Ջալիլյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Խանում Սուրենի Ջալիլյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 29
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» ապրիլի 2020 թվականի N 205-Ա

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Ներսես Վարդգեսի Մեհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 3-րդ փողոցի թիվ 9 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ներսես Վարդգեսի Մեհրաբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» ապրիլի 2020 թվականի N 206-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Ռոբերտ Վիգենի Պետրոսյանին և Արման Ռոբերտի Պետրոսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 65, 67 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռոբերտ Վիգենի Պետրոսյանին և Արման Ռոբերտի Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 29
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» ապրիլի 2020 թվականի N 207-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Գևորգ Ավետիքի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի թիվ 13 հասցեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ տնտեսական պարագաների պահեստի շենքի կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գևորգ Ավետիքի Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 30
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2020 թվականի N 208-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 24-ի «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու մասին» թիվ 108-Ա որոշման կատարել հետևյալ լրացումը.

1)որոշման 1-ին կետում «ճարտարապետահատակագծային առաջադրանք՝» բառերից հետո լրացնել «60 տեղանոց» բառերով:

2.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 30
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2020 թվականի N 209-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Սոնա Ալիկի Մարտիրոսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 18-րդ փողոցի թիվ 23 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ իրականացրել է շինարարական աշխատանքներ և կառուցել քարե կիսակառույց շինություն, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Սոնա Ալիկի Մարտիրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Սոնա Ալիկի Մարտիրոսյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228101 հաշվին:

3.Պարտավորեցնել Սոնա Ալիկի Մարտիրոսյանին, դադարեցնել շինարարական աշխատանքները՝ մինչև համապատասխան նախագծային փաստաթղթեր ներկայացնելը և շինարարության թույլտվություն ստանալը:

4.Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Սոնա Ալիկի Մարտիրոսյանին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Սոնա Ալիկի Մարտիրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

6.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

7.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 30
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«30» ապրիլի 2020 թվականի N 210-Ա

### ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Անուշիկ Լյուդվիգի Բուռնազյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 41-րդ փողոցի թիվ 44 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորի դիմացի հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողակտորում, առանց հողօգտագործման իրավունքի ինքնակամ իրականացրել է շինարարական աշխատանքներ և կառուցել մետաղական ծածկոց, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Անուշիկ Լյուդվիգի Բուռնազյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 400 000 (չորս հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Անուշիկ Լյուդվիգի Բուռնազյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228101 հաշվին:

3.Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Անուշիկ Լյուդվիգի Բուռնազյանին:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Անուշիկ Լյուդվիգի Բուռնազյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. ապրիլի 30
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» մայիսի 2020 թվականի N 211-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասով,

***որոշում եմ.***

1. 2020 թվականի մայիսի 14-ին, ժամը $16^{00}$-ին հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով՝

1)Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 84-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2) Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու մասին:

2.Պարտավորեցնել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ օրենքով սահմանված կարգով ավագանու անդամներին տրամադրելու արտահերթ նիստի օրակարգը, ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. մայիսի 4
գ. Ջրվեժ